ՄԵԾԱՀՈԳՈՒԹՅՈՒՆ

Հատված Անդրե Կոմթ-Սփոնվիլի “Մեծ առաքինությունների մասին համառոտ քննախոսություն. Իմաստասիրության օգտագործումն առօրյա կյանում” գրքից (Լոնդոն, Վիլյամ Հեյմեման, 2001թ., ֆրանսերենից անգլերեն թարգմանված Քեթրին Թեմերսոնի կողմից):

Andre Comte-Sponville, (trans. Catherine Temerson), A Short Treatise on the Great Virtue: The Uses of Philosophy in Everyday Life, (London: William Heinemann, 2001).

Մեծահոգությունը՝ տալու առաքինությունն է: Սակայն, ի տարբերություն արդարության, որը պահանջում է տալ “յուրաքանչյուրին ըստ արժանվույն”, մեծահոգությունը նշանակում է ուրիշին տալ ոչ թե նրան պատկանելիքը, այլ քոնը՝ որից նա զուրկ է: … Անշուշտ, երկուսն էլ՝ արդարությունն ու մեծահոգությունը, վերաբերում են այլոց հետ մեր հարաբերություններին: … Մեծահոգությունը, կարծես, ավելի առնչվում է սրտի կամ խառնվածքի հետ, արդարությունը՝ մտքի կամ բանականության: Մեծահոգությունը չի նշանակում գործել այս կամ այն օրենքի համաձայն: Այն նշանակում է անել ավելին, քան օրենքի պահանջն է, առնվազն ավելին, քան մարդկանց օրենքների պահանջն է և գործել լոկ սիրո, բարոյականության և միաբանության պահանջներին համապատասխան:

Միաբան լինելը մի խմբի մաս կազմելն է՝ այնպիսի խմբի, որն ամբողջական է: Լատիներենում “solido” բառը “ամբողջականն” է (որից անգլերեն և այլ եվրոպական լեզուներում “solidarity”: *հայերենի թարգմանչի ծանոթագրությունը*): Այստեղից էլ, Ֆրանսիական օրենսդրությունում, պարտապաններն անվանվում են “solidaire”՝ երբ միասնաբար են պատասխանատու պարտքի համար: …Միաբանությունը, նախ և առաջ համախմբվածության, փոխկապվածության, շահերի համընդհանրության կամ ընհանուր նպատակի իրողությունն է:

Երկուսից մեկը պիտի լինի: Կամ համայնքը իրոք համայնք է, որը գոյություն ունի այնպես, որ ուրիշներին պաշտպանելիս պարզապես ինքս ինձ եմ պաշտպանում (այստեղ դատապարտելի ոչինչ չկա, բայց նման գործունեությունն ավելի շատ բխում

է անձնական շահերից, քան թե պայմանավորվում է բարոյականությամբ), կամ էլ համայնքը պատրանքային է, վերացական կամ գաղափարական, այնպես, որ հանուն ուրիշների իմ պայքարն այլևս միաբանության խնդիր չէ (քանի որ պայմանավորված չէ իմ անձնական շահերով), այլ արդարության կամ մեծահոգության (արդարությանª եթե ուրիշները ճնշվում են, զրկանքների ենթարկվում կամ հարստահարվում, և մեծահոգության, եթե վերը նշված վիճակը չէ, այլ նրանք պարզապես թույլ են կամ դժբախտության մեջ են): Այլ կերպ ասած, միաբանությունը կամ չափազանց եսասիրական է, կամ չափազանց երևակայական, որպեսզի առաքինություն լինի: Այն կամ անձնական շահերի ճշգրիտ իմացության խնդիր է, կամ էլ սխալ մեկնաբանված մեծահոգություն:

Միաբանությունը կարող է իրոք մեծահոգություն լինել, եթե այն վեր է անձնական շահից, ընդհանուր շահերից, այլ կերպ ասածª միայն եթե վեր է միաբանության շահերից: Եթե այլոց օգնելը մեր շահերից է բխում, ապա մեծահոգի լինելու կարիքը չէինք ունենա, պարզապես այդպես կանեինք: Այն փաստը, որ այդպես չենք անում, կամ անում ենք փոքր չափով, ապացուցում է, որ մենք այդպիսի արարքներն իրականում չենք դիտում որպես մեր շահերի բաղադրիչ և, այդպես ձևացնելով, դառնում ենք կեղծավորներ£ Ոչ այն պատճառով, որ դժվարանում ենք տեսնել կամ հասկանալ, այլ այն պատճառով, որ մեր սրտերը վատն են, որովհետև եսասեր են. ավելի շատ մեծահոգությունից ենք զուրկ, քան հասկանալուց:

Քո եկամտի քանի՞ տոկոսն ես տրամադրում նրանց, ովքեր քեզնից ավելի աղքատ են, կամ նվազ հաջողակ են, քան դու: Հարկերը հաշիվ չեն, որովհետև պարտադիր են, նաև մի հաշվեք ընտանիքին կամ մտերիմներին տրամադրածը, քանզի ավելի շատ սիրով, քան թե մեծահոգությամբ է պայմանավորված այն ինչ անում ենք իրենց համար (ինչը մենք անում ենք նաև մեզ համար, քանի որ իրենց երջանկությունը նաև մեր երջանկությունն է): Իսկ կարո՞ղ ենք իմանալ, թե այն չնչինը, որ մենք այնուհանդերձ անում ենք, բխում է արդյոք մեծահոգությունի՞ց, թե՞ սոսկ միջոց է բարոյապես հանգիստ լինելու համար, դառնալով այն փոքր գինը, որ վճարում ենք, որպեսզի մեր խիղճը հանգիստ լինի:

Ինչպես գրում է Ժանկելևիչը, “Չնայած կարող ենք տալ առանց սիրո, գրեթե անկարելի է սիրել առանց տալու”: Բայց ուրեմն սե՞ր է դա, թե՞ մեծահոգություն: Այնուամենայնիվ, այն գաղափարը, թե մենք մեծահոգի ենք մեր երեխաների հանդեպ,

երբեք մտքովս չի անցել: Մենք պարտավոր ենք մեծահոգի լինել նրանց հանդեպ£ Մենք չափազանց սիրում ենք մեր երեխաներին, չափազանց մտահոգվում ենք նրանց համար, ուստի այստեղ առաքինություն տեսնելով , միայն կմոլորեցնենք մեզ: Ինչ որ իրենց համար ենք անում, միաժամանակ անում ենք մեզ համար, ինչու՞ պետք է առաքինության կարիքը զգայինք: Սերը բավարար է, այն էլ ի՜նչ սեր: Ինչ վերաբերում է մյուս տեսակ սիրունª եսից վեր եղած սիրունª սրբերի կամ օրհնյալների սիրուն, վստահ չեմ, թե մեծահոգությունը կարող է դրա մասին մեզ շատ բան ասել, կամ թե այդ սերը կարող է մեզ մեծահոգության մասին շատ բան հայտնել:

Մեծահոգությունը, ինչպես ասեցի, տալու առաքինությունն էª դրամ տալու (որի դեպքում այն հանգում է առատաձեռնության), կամ անձնվիրությունն է (երբ այն արդեն դառնում է վեհանձնություն, կամ նույնիսկ անձնազոհություն):

Ըստ Դեկարտի, մեծահոգությունը, դա անձի կողմից իր ազատության գիտակցումն է (կամ անձի ազատ և պատասխանատու լինելու գիտակցումը) և հաստատուն որոշումն է այդ ազատությունը ճիշտ օգտագործելու վերաբերյալ: Ուստի, գիտակցություն և ինքնավստահությունª ազատ լինելու գիտակցություն և այդ ազատության օգտագործման ինքնավստահություն: Սա է պատճառը, որ մեծահոգությունը ինքնագնահատման արգասիքն է: Դեկարտը մեծահոգության մեջ տեսնում է ոչ միայն բոլոր առաքինությունների ակունքը, այլև “յուրաքանչյուր անհատի գերագույն բարեսրտությունը”, որն, ըստ նրա, բաղկացած է “լավն անելու հաստատուն կամքից և դրա արդյունքում առաջացած գոհունակությունից”:

Իսկական ընկերները, նշում է Մոնթենը. “չեն կարող միմյանց որևէ բան տալ կամ ի պահ հանձնել”ª … “ամեն ինչ, փաստորեն, ընդհանուր է նրանց միջև”:

Իր ձևով, մեծահոգությունը, ինչպես և մյուս առաքինությունների մեծ մասը համապատասխանում է Աստվածաշնչյան պատվիրանին: Սակայն կարո՞ղ ենք իրոք սիրել մեր մերձավորներին, ինչպես ինքներս մեզ: Եթե հնարավոր լիներ, մեծահոգության նպատակը ի՞նչը կլիներ: Եվ ինչքանո՞վ է արդյունավետ սերը պատվիրան դարձնելը, եթե անկարող ենք հետևելու այդ պատվիրանին: Միայն գործողություններն են ենթակա պատվիրաններին: Ուստի, պատվիրանի պահանջը ոչ թե սիրելն է, այլ սիրո չափանիշներով գործելըª վերաբերվել մերձավորին կամ անծանոթին այնպես, ինչպես կվերաբերվենք մեր սիրեցյալներին: Պատվիրանը

թելադրում է ոչ թե զգացմունքներ կամ հույզերª որոնք փոխանցելի չեն, այլ արարքներª որպես այդպիսիք:

Ողջ աշխարհը մի բեմ է, և ապրել նշանակում է դեր խաղալ: Բայց այս մարդկային կատակերգությունում դերերն ու խաղացողները հավասարապես լավը չեն: Շեքսպիրյան իմաստության համաձայն, բարոյականությունը գուցե դերակատարում է, բայց չկա որևէ լավ ներկայացում, որն ինչ-որ ձևով բարոյականության հետ առնչություն չունենա: Ծիծաղելուց կամ լացելուց ավելի լուրջ կամ իրական բան գոյություն ունի՞: Մենք ձևացնում ենք, բայց սա խաղ չէ: Մեր հետևած օրենքները մեր զվարճանքի համար չեն: Նրանք են մեզ դարձնում այն, ինչ որ ենքª լավ կամ վատ իմաստով: Յուրաքանչյուրս մի դեր է խաղում, բայց այդ դերը մեզ համար յուրահատուկ է: Եվ հիրավի, դա ավելին է, քան դերը, դա մեր կյանքն է, մեր պատմությունը£ Սրա մեջ կամայական կամ պատահական ոչ մի բան չկա: Մենք դառնում ենք այն, ինչ որ ենքª մեր կյանքի փորձությունների միջոցով:

Մեծահոգությունը մեզ կոչ է անում տալª սիրո բացակայությամբ, հենց այն մարդկանց, ում չենք սիրում և տալ այնքան, որքան նրանք կարիք ունեն, կամ որքանով մեր ներուժը թույլ է տալիս իրենց օգնելու: Իսկապես, երբ սերը մեզ ուղեցույց չի հանդիսանում, որովհետև չենք զգում այն, առաջնորդվենք անհրաժեշտության ու մերձավորության զգացումով: Ոմանք սրան գթասրտություն են ասում, բայց դա սխալ է (քանզի իսկական գթասրտությունը սերն է, իսկ կեղծ գթասրտությունըª ողորմածությունը կամ խղճահարությունը): Դա պիտի մեծահոգություն կոչվի, որովհետև այն մեզանից կախյալ է, միայն մեզանից, որովհետև այս իմաստով ազատ է, որովհետևª ի տարբերություն բնազդների, ուեցվածքի ու վախերի լուծի, այն հենց ազատությունն էª հոգով և գործով: Սերը ավելի լավ կլիներ, անշուշտ, որից էլ եզրակացվում է, որ բարոյականությունը ամեն ինչ չէ, ոչ էլ էականն է: Սակայն մեծահոգությունն այնուամենայնիվ ավելի լավ է եսասիրությունից, իսկ բարոյականությունըª անտարբերությունից:

Անձնական առավելությունը ավելի հանգստավետ պայմանների կամ ավելի երկար ապրելու մեջ չէ, այն հնարավորինս ավելի ազատ ապրելն էª ըստ հնարավորին իսկությանը համապատասխան: Հավիտյանս ապրելը չէ նպատակը, որովհետև այն անիրագործելի էª **նպատակը լավ ապրելն է: Իսկ ինչպե՞ս կարելի է դա անել առանց համարձակության և մեծահոգության:**

Ըստ Հյումի, եթե մեծահոգությունը բացարձակ տիրապետող և տիեզերական լիներ, արդարության կարիքը չէինք ունենա և, ինչպես տեսանք, այդպիսի պայմաններ հնարավոր է պատկերացնել միայն վերացականորեն: Մյուս կողմից էլ, պարզ է, որ արդարությունը, նույնիսկ երբ հաստատված լինի, չի կարող փոխարինել **մեծահոգությանը, որը՝ չնայած նվազ անհրաժեշտ է հասարակությանը, քան արդարությունը, սակայն ավելի թանկ է**, ըստ իս, մեր մարդկայնության տեսանկյունից:

Եզրափակեմ, նկատելով, որ մեծահոգությունը, ինչպես բոլոր մյուս առաքինությունները, բազմազան է և՛ բովանդակության առումով, և՛ այն անվանումներով, որոնք օգտագործվում են այն նկարագրելու համար: Համարձակության հետ զուգակցվելով, այն դառնում է հերոսություն: Միանալով արդարությանը՝ դառնում է անաչառություն: Համատեղվելով կարեկցանքին, դառնում է բարեսրտություն: Ողորմածության հետ մեկտեղ՝ ներողամտություն: Սակայն նրա ամենագեղեցիկ անունը իր գաղտնիքն է, մի բաց գաղտնիք, որի մասին գիտեն բոլորը. մեղմության հետ միասին, այն կոչվում է **բարություն**: